

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յայտնի է, որ մեր Ազգային Նա-
հապետական կենսաց զօրութիւնն օր
սուր կը նուազի. իսկ մեր Ազգային
Դպրոցներն չունին այն հիմնաւոր կըր-
թութեան ընթացքն ու ուղղութիւնն,
որովնոր սերունդն կարող լինի իւր Նա-
խահարց նահապետական զօրութեան
փոխարէն ունենալ գիտութեան եւ
ճշմարիտ քաղաքակրթութեան զօրու-
թիւն. Մենք ստիպուած ենք ուրեմն
Եւրոպական յառաջագէտ Ազգաց կրթ-
թութենէն օգուտ քաղել՝ նոյն իսկ
տեղական Դպրոցներուն մէջ. Բայց
ստարակոյս չը կայ, որ մեր մանուկներն
աւելի կ'օգտին Եւրոպական կրթու-
թենէն, երբ խնամատար հսկողու-
թեան ներքեւ գտնուին եւ հանրա-
կան գիտութեանց ուսման հետ՝ մայ-
րենի լեզուի եւ կրօնի ուսումն եւս շա-
րունակեն:

Սոյն գովանի խորհրդով ահա Մեծ,
Իփէկձեան Էֆէնտի, Զուլցերիոյ Լու-
դան քաղաքի մէջ բնակութիւն հաս-
տատելով, հետեւեալ Յայտարարու-
թիւնն կ'առաջարկէ ունեւոր Հայ ծը-
նողաց եւ բարերար Ազգայնոց, որք
փափաք ունին իրենց զաւակներն կամ
որդեգիրներն Զուլցերիոյ Դպրոցներն
ընկել:

«ԱՄԵՆ ՀԱՍԱԿԻ աշակերտ կ'ըն-
դունիմ, եւ իւրաքանչիւրը՝ իւր հասա-
կին ու ընդունակութեանց համեմատ՝
տեղւոյս բարեկարգ վարժարաններէն
մէկը կը գնեմ: Կը հսկեմ անոնց յա-
յառաջագիմութեանը վրայ, եւ մաս-
նաւոր խնամք կը տանիմ անոնց ֆիզի-
քական եւ բարոյական կրթութեանը:

Փափաքողաց կ'աւանդուի Հայե-
րէն, Հայոց սլաւոնութիւն եւ կրօնագի-

տութիւն. նոյնպէս եւ Տաճիկերէն, եւ
թէ գէթ 5 աշակերտ ըլլայ:

Ամեն ամսագլուխ աշակերտաց վա-
րուց եւ յառաջագիմութեանը վրայ վը-
կայական կը խրկեմ ծնողաց:

Տարեկան թոշակն է 2,300 Ֆրանք,
վեցամսեայն կանխիկ վճարելի: Վա-
քանախ համար զեղջ չըլլար:

Եթէ աշակերտի մը հրաժարիլն եւ
րէք ամիս առաջ իմացուցած չըլլան,
եռամսեայ թոշակ կը սահանջուի զե-
կուցման օրէն հաշուելով:

Հագուստ, ճերմակեղէն, դպրոցա-
կան պիտոյք (գլխք, տետրակ, եւ այլն)
եւ մանրածախք (չըջաքայութիւն, եւ
այլն) ծնողաց վրայ է:

Աշակերտ խրկող ծնողք ներկայ
պայմաններս ընդունած կը համարուին:

Աւելի ընդարձակ տեղեկութիւն
ստանալու համար ինձ գիմելու է հե-
տեւեալ հասցէով:

3/15 Նոյեմբեր 1875

ԼՕԶԱՆ

Lausanne-Suisse

H. Ipekdgian

Rue Haldimand, 5, au 2^{ieme}.

Յ. Գ. Յանձն կ'առնում նոյնպէս
եւ աշակերտութիւն ընդունիլ՝ պատուա-
ւոր ընտանեաց մէջ կամ աղջկանց վար-
ժարանները գնելու համար, վարժա-
պետ եւ վարժութի գտնել թէ՛ մասնա-
ւոր ընտանեաց եւ թէ՛ վարժարանաց
համար, եւ կրթութեան վերաբերեալ
ամեն յանձնարարութիւնք կատա-
րել:

